ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 24 - Ա
25 փետրվարի 2014 թ.

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՀԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի>> 32-րդ կետի 1-ին ենթակետի պահանջը

որոշում եմ՝

1. Ընդունել ի գիտություն, որ <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վահան գյուղի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ընտրության համար 2014 թվականի փետրվարի 20-ին անցկացված մրցույթը համապատասխանում է հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի պահանջներին:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի վարիչ Ն. Մաթևոսյանին՝ <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վահան գյուղի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի համար անցկացված մրցույթում հաղթող ճանաչված Լիանա Աշոտի Մարտիրոսյանի հետ սահմանված կարգի համաձայն աշխատանքային պայմանագիր կնքելու համար ներկայացնել համապատասխան կարգադրության նախագիծ:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս . Խլղաթյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ